

ԼՈՒՐԵՐ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Լիոնի «Տիգրան և Հռիփսիմե Փափազյան» ամենօրյա վարժարանը

1987 թվականին իրականացավ Լիոնի (Ֆրանսիա) հայ համայնքի տարիների երազանքը. այնտեղ բացվեց հայկական ամենօրյա վարժարան: Սկզբում աշակերտների թիվը ինն էր: Այժմ արդեն վարժարանում կրթություն և հայեցի դաստիարակություն են ստանում շուրջ 50 աշակերտներ: Վարժարանում ուսանելը ձրի է. այդ հոգսը իր վրա է վերցրել վարժարանի խնամակալությունը:

«Առանց հայկական դպրոցի ֆրանսահայ գաղութը ապագա չունի». դպրոցի հիմնադրության առթիվ այսպես է արտահայտվել Ֆրանսիայի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանը: Այսօր ողջ գաղութը՝ հոգևոր դասը, եկեղեցական վարչությունը, կանանց միությունները, ծնողները և անկեղծ շահագրգռությամբ լի այլ անձինք, բացառիկ ոգևորությամբ լծված են վարժարանի ծաղկման և բարգավաճման արբազան գործին:

1990 թվականի դրությամբ դպրոցն ունի մանկապարտեզի երկու և նախակրթարանի մեկ դասարաններ: Նախատեսված է 1991 թվականին բացելու նախակրթարանի երկրորդ դասարանը:

Դպրության չորս աստիճանների տվչության և ուրար կրելու իրավունքի արարողություն Լիոնի հայոց Ս. Հակոբ Մայր եկեղեցում

Հոկտեմբերի 28-ին, կիրակի օրը, Հոգեգալստյան տոնի առթիվ, Լիոնի հայոց Ս. Հակոբ Մայր եկեղեցում տեղի ունեցավ դպրության չորս աստիճանների տվչության և ուրար կրելու իրավունքի հանդիսավոր արարողություն՝ ձեռամբ Ֆրանսիայի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ գերաշնորհ Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի: Եկեղեցու երիտասարդ վեց սպասավորներ, ծունկի եկած Սուրբ

Սեղանի առջև, ուխտում են հավատարիմ մնալ և բոլորանվեր ծառայել Աստծուն և Քրիստոսի սուրբ Եկեղեցուն: Նորընծաներն են՝ «Հայկազյան» միօրյա վարժարանի հինգ աշակերտներ՝ Արտա Տալեթյան, Արթուր Մինասյան, Էդվարդ Կետիքյան, Ռաֆֆի Աքսարլյան և Պողոս Նազարյան:

Դպրության չորս աստիճանների տվչությունից հետո սրբազան հայրը ուրար կրելու իրավունք շնորհեց Լևոն Ղազարյանին:

Այնուհետև, ս. պատարագից հետո, այս առթիվ եկեղեցու Մեծ դահլիճում տեղի ունեցավ համեստ հյուրասիրություն: